

ՄԱՐԿՈՎՈՒԹԻՒՆ ՏԵՎԻՆ ՀԵՂԻՆԷ ՇՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ
ՅԵՂՈՐԵԱՆՈՒ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐԸ.

Դ Ր Ե Յ

ԵՂԻՆԷ Ա. ԲՈՒ. ԳԵՂ.Ս.ՄԵԱՆՑ

Протоіерей Егишэ Гегамянцъ. Уроки исторіи.

Перепеч. изъ журнала „Овечь“

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

Բ Ս. Գ Ո Ւ

Էլեգրո-տպարան Ն. Ա. Երևանցիանի

էկտրո-тип. Н. А. Эриванцова, Баку.

1915

9147.925)

Q-42

916

6868

18 AUG 2006

ՀՐԵՏԱՐԵՆՈՒԹՅԱՆ ՏԻԿՆԻ ՀԵՂԻՆԷ ՅԵՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՅԵՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՑԻ

15 SEP 2011

9(47.925)

9-42 յժ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐԸ.

Գ Ր Ե Յ

ԵՂԻՆԷ ա. Բահ. ԳԵՂԱՄԵՍՆՅ

1004
11791
4001

Ձ

Протоіерей Егишэ Гегамянцъ. Уроки исторіи.

Перепеч. изъ журдала „Овить“

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

Բ Ա Գ Ո Ւ


Էլեկտր.-տպարան Ն. Ա. Երևանցեանի

Электро-тип. Н. А. Эриванцова, Баку.

1915

18 MAR 2013

18 MAR 2013



ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐԸ

1.

Արևելեան հարցը նորից հրապարակ իջաւ և Բալկանեան քրիստոնեայ դաշնակից տէրութիւնները և Օսմանեան տէրութիւնը ճակատագրական պատերազմ են մղում միմեանց հետ:

Անշուշտ պատերազմը շուտով կը վերջանայ և եւրոպական մեծ պետութեան ներկայացուցիչներին վեհաժողով կը կազմուի՝ հաշտութեան պայմանները կռուող կողմերին թելադրելու:

Ինչպէս որ սպասելի էր, մեզ մօտ, հայերիս մէջ էլ զարթեցաւ այսպէս անուանեալ «հայկական հարցը»: Եւ Ս. Ստեֆանոյի 16 ու Բերլինի դաշագրի 61 յօդուածները բերնից բերան են շրջում արդէն:

Իրենամներ անկող յորդորներ ևն կարդացում թէ առանին ժողովներում, թէ պաշտօնական շրջաններում և թէ հայ մամուլում, առաւելա-

պէս նրա «ազատամտական-յառաջադիմական» բանակում *):

Ո՛չ միայն հայ հրապարակախօսը, այլ նաև հայ բանաստեղծը ևս՝ նորից ասպարէզ է իջնում **) և քաղաքական կնճռոտ ու բարդ հարցի լուծումը՝ իր քնարի միալար զընդզընդօցողի է ուզում վճռել:

Առանց իմ կողմից որևէ կարծիք յայտնելու արծարծուած խնդրի մասին ըստ էութեան, — ներկայ յօդուածովս ես զալիս եմ ընթերցողներին ամենահամառօտ կերպով ծանօթացնելու այն դասերի հետ, որ պատմութիւնը մեզ աւանդել է «հայկական» կոչուած հարցի վերաբերմամբ:

Այդ դասերն հին, շատ հին են: Նրանք կամ

*) Երկու օր առաջ Բագուում պ. Կոստանդին Սատրսեանի հրաւիրանօք և նոյա նախագահութեամբ և ոստիկանութեան ներկայացուցչի ներկայութեամբ կազմուած ժողովում՝ նոյնիսկ յմի այնպիսի ազատամիտ անձն գտնուեցաւ, որ խիստ անհրաժեշտ էր համարուած, որպէսզի ուստահայերը նորից խլրտուսներ առաջացնեն Տաճկա-Հայաստանում, նորից զինուած խըմբեր ուղարկեն այնտեղ:

**) Տես «Հորիզոն» №№ 196 և 227 պ. Յովհ. Թումանեանի յօդուածները:

բոլորովին անծանօթ են մնացել հայ ներկայ սերունդին և կամ իսպառ մոռացել:

Ուստի վատ չէր լինիլ, եթէ մենք վերջիչէինք այդ շատ հին, բայց միևնոյն ժամանակ նոր դասերը: Դա մեզ կարող է օգտակար լինել:

Յայտնի է, որ պատմական Հայաստանը գտնուելիս է եղել երկու հզօր հարևան պետութիւնների մէջտեղը:

Այդ պետութիւնները միմեանց հետ մըրցակցելիս, միմեանց հետ պատերազմելիս, միշտ և հանապազ դիմել են — երբեմն յայտնի և երբեմն մըն գաղտնի կերպով — հայերի օգնութեանը,

Հայերն էլ օգնել են՝ ինչով որ կարողացել են երբեմն այս կողմին, երբեմն միւսին, նայելով թէ ո՞րն է իրենց ձեռնտու:

Սակայն քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ՝ հայերի համակրութիւնը բացարձակաբար շուռ եկաւ դէպի կրօնակից քրիստոնայ պետութեան կողմը, որ էր Յունաստանը:

Դրա համար, ի հարկէ հայերն ունէին իրենց պատճառներն: Սակայն ես զըմանց առաջ չեմ բերում: Ես լոկ իրողութիւնն եմ դուրս բերում:

Բնական է, որ հայերի Յունաստանին յա-

րելը՝ միւս հարկան պետութեանը — Պարսկաստանին հաճելի չէր:

Այս էր պատճառը, որ Յուլիանոս կայսեր սպանուելուց յետոյ՝ 363 թուին, նրա յաջորդ Յովիանոսը Շապուհի հետ կապած դաշնագրի մէջ հետեւեալ կէտը մտցնելու ստիպուեցաւ, որ Հայաստանը թոյլ արուի իր անկախ կամքին և զօրութեանը: Եւ հռոմայեցիք այլևս օգնական չլինին հայերին, չգրգռեն նրանց:

Դաշնագրի այս կէտով ուրեմն քրիստոնեայ հռոմայեցիին՝ իր կրօնակցին, իրեն այնքան օգնողին ձգեց պարսիկների ճակիր, առանց խնդճահարուրեան:

Շաա պարզ է, որ հռոմայեցիները (յոյները) այս վարձուքը ժամանակին շաա նեղ տեղ պէտք է լծէր հայերին: Ուստի Արշակ թագաւորը՝ Ներսէս կաթողիկոսի առաջնորդութեամբ՝ Վաղէս կայսրին մի պատգամաւորութիւն ուղարկեց և յիշեցնելով երկու կրօնակից ազգերի եղած պայնաները՝ խնդրեց պարսից վրեժխնդրուրեանը յենքարկել հայերին:

Սակայն Վաղէս կայսրը, որ Արիոսական էր, հայոց կաթողիկոսին առաջարկեց, որ նա էլ Արիսականութիւնն ընդունէ և հայ ազգին էլ այդ աղանդին դարձնէ եւ երբ Ներսէս չյօժարուեց — Վաղէսը նրան ախար ղչեց: Իսկ դես-

պանութեան միւս անդամներին ձեռնունայն յէս դարձրեց:

Արշակի ուղարկած այդ պատգամաւորութիւնը իրեն վրայ շաա թանգ նստեց: Շապուհը յարձակեց Հայաստանի վրայ: Արշակը մի քանի տարի կարողացաւ դիմադրել, սակայն վերջի վերջոյ յաղթուեցաւ և 368 թ. Անյուշ քերդի քանսը ձգուեցաւ, ուր եւ վերջ դրեց իր կեանքին:

Արշակը դես կենդանի էր, որ նոյն Վաղէսը իսկոյն Պապին սպանել տուեց, դարսճան մտնով կազմուած մի խնդոյի ժամանակ:

Վերջապէս 384 թուին Շապուհ Գ. և Մեծն Թէոդոս Ա. Հայաստանը միմեանց մեջ բաժանեցին:

Եւ այդ դժբաղ երկրի մեծագոյն և ընտիր մասը — բուն Հայաստանն պարսից ձեռքն անցաւ: Իսկ հռոմայեցիներին միմիայն մի քանի սահմանակից գաւառները բաժին ընկաւ:

Չնայած այն հանգամանքին, որ հռոմայեցիք անկարող գտնուեցան Հայաստանին տէր դառնալ և հայերին իրենց պաշտպանութեան տակն առնել, — այնուամենայնիւ նրանք միշտ իրենք զիրենք հայերին պաշտպան եին ձեռացնում: Եւ մինչդեռ մի կողմից իրենց բաժնի հայերին հարածում եին եւ յեին թոյլ տալիս,

որ նրանք մայրե՛ի շեզուով՝ իրենց ժամերգութիւնները կատարեն (այդ միջոցին հայոց սաները գտնուած և Ս. Գիրքը թարգմանուած էրս. Մետրոպի եւ Սահակի ձեռքով), — այնուամենայնիւ Պարսկաստանի գործերին միջամտելու ամենալաւ առիթ էին համարում պարսկահպատակ հայերին այսոյեան եւ պաշտպան ներկայացնելու իրենց: Իսկ երբ պարսից հետ պատերազմելու հարկին մէջ գտնուած էին լինում, պատերազմի պատճառ՝ հայերի վիճակի քարտուրումն էին հրատարակում:

Իսկ երբ պարսիկներէց յաղթուելով ստիպուած էին լինում հայերին կրկին պարսից հրպատակութեան տակ թողնել, — հաշտութեան դաշնագրի մէջ ի նպաստ քրիստոնէականներին մի յօդուած էին մտնում:

Այդպիսի յօդուածները երկու նպատակ ունէին: Առաջինը այն էր, որ այդպիսի յօդուածները առիթ լինի իրենց համար յարմար ժամանակում, դարձեալ միջամտելու պարսից գործերի մէջ: Իսկ երկրորդը՝ որ հայերը իրանցից չստոյեն, երես շոր յսան:

Այդպէս՝ 423 թուին, երբ Թէոդոս Բ. կայսրը պարսից Վուամ Ե. թագաւորի հետ հաշտութիւն էր կնքում, Պարսկաստանի քրիստոնէականների ազատութեան ապահովող մի յօդուած եւս մտնեց:

Նմանապէս Խոսրով Նուշիրվանի ժամանակ, երբ Մեծն Յուստինիանոս դաշինք կապեց 562 թուին, պայման դրեց, որ պարսկահպատակ քրիստոնէականները կրօնի կատարեալ ազատութիւն ունենան:

Շատ հասկանալի է, որ համանման յօդուածները ներքին և բուն միտքը պարսիկները շատ լաւ ըմբռնում էին: Եւ միշտ և հանապազկասկածանքով էին վերաբերում դէպի հայերը: Եւ եթէ ոչ յայտնապէս, զոնէ դադանապէս ամեն վատութիւն անում էին հայերին:

Իսկ յոյները հետուից լոկ հանգիստատեաներ էին լինում այդ ամենին: Եւ ոչ այդչափ միայն, այլ նաև պարսիկներին ուղղակի խորհուրդ էին տալիս կոտորել հայերին և իրենց հայրենիքից դուրս քշել:

Այսպէս՝ Յուստինիանոսի յաջորդներից մէկը մի անգամ վեր կացաւ և պարսից թագաւորին հետևեալ նամակը գրեց. «Հայերը, — ի միջի այլոց գրում էր յունաց կայսրը, — ըմբոստ և անհանգիստ ազգ են: Եւ մեր մէջ ապրելով մեզ միմեանց հետ կուացնում են: Արի պայմանաւորւենք, ես իմ հպատակ հայերին հաւաքելով Թրաքիա կուղարկեմ, իսկ դու հաւաքիր քո հրպատակ հայերին և դէպի արևելք քշիր: Եթէ նրանք այնտեղ կոտորուեցան, նշանակում է մեր

թշնամիները կոտորեցան, իսկ եթէ կոտորեցին, մեր թշնամիներին կոտորած կը լինին: Իսկ մենք այնուհետև միմեանց հետ հաշտ կապրինք: Լաւ իմացիր, քանի որ հայերը իրենց հայրենիքումն են ընտկում, մենք հանգստութիւն չունինք» *):

Յոյների այս անգաղղում միջամտութիւնները, նրանց այս նենգամիտ և խարդախ դարաւոր քաղաքականութիւնը եղաւ՝ եթէ ոչ միակ՝ գոնէ գլխաւոր պատճառներից մէկը՝ հայ Արշակունեաց թագաւորութեան վերջնական տապալմանն ու կործանմանը:

Դառնանք Բագրատունեաց թագաւորութեանը:

II:

Բագրատունի ցեղը քաղաքացիտ, խոհեմ և զգոյշ զիրք բռնեց դէպի տիրապետող տարրը — Արաբացիք: Բագրատունիք շատ լաւ ըմբռնել էին յունական քաղաքականութեան նենգութիւնը, ուստի և խուսափում էին յոյների յետ սերտ յարաբերութիւն ունենալուց, նամանաւանդ իրենց յոյսը նրանց վրայ դնելուց: Բագրատունիների այդ խոհեմ ընթացքը շատ հաճե-

*) Աղոնց՝ Армения вл эпоху Юстиниана, էր. 206:

լի թւաց արաբացիներին, որոնք ի նշան իրենց վստահութեան՝ 859 թւին Աշոտ Բագրատունուն «Պշխանաց իշխան» կարգեցին և ապա 26-ամեայ իմաստուն, խաղաղասէր կռուութիւնը գնահատելով և ժամանակին Գէորգ կաթողիկոսի միջնորդութիւնը յարգելով՝ Աշոտին թագաւորական թագ ուղարկեցին, այսպիսով սկիզբն դրնելով Բագրատունեաց թագաւորութեանը:

Կարծես դրան էին սպասում յունաց կայսրները:

Նրանց քաղաքական հաշիւներին շատ ձեռնտու երևեցաւ՝ իրենց սահմանակից մի փոքրիկ տէրութեան կազմելին, որի կրօնակցութիւնից օգտւելով՝ առիթներ կունենային, — չեղած տեղումն էլ կը հնարէին, — արաբացիների գործերի մէջ խառնւելու:

Ուստի և Վասիլ Ա. կայսրը, ի նշան խոնդակցութեան իբր, աճապարեց և ինքն էլ իր կողմից Աշոտին թագ ուղարկեց: Վասիլի օրինակին հետևեց նրա յաջորդը՝ Լևոն Զ., որ Սըմբատ Ա.-ին նոյնպէս թագ ուղարկեց:

Եւ այսպէս, կամաց կամաց յունական խորամանկութիւնը այնքան առաջ գնաց, որ նրանց կայսրները Բագրատունեաց թագաւորներին «նոզետոր զաաակ» էին անուանում, իսկ հայերն էլ նրանց «հոզետոր հայր» էին յորջորջում:

Բայց այս ամեն սիրալիր յարաբերութիւնները լոկ պղատոնական էին: Բագրատունի հայ թագաւորները քաղաքավարութեան ամեն ծէսերը կատարելով հանդերձ յոյների վերաբերութեամբ—իրենց սանձը նրանց ձեռքը չտուին, նրանց անձնատուր չեղան: Այլ շարունակելով իրենց կօրրեկա, լոյեալ ընթացքը դէպի արաբացիները՝ ձեռնամուխ էին լինում շինարար, խաղաղ գործունէութեան:

Եւ անշուշտ այդ գործունէութեան արդիւնքն էր, որ համեմատաբար շատ կարճ ժամակում, Բագրատունեաց թագաւորութիւնը այնքան առաջ գնաց և ծաղկեցաւ քաղաքներով, գիւղերով, եկեղեցիներով, պալատներով, զանազան հոյակապ շէնքերով արհեստներով և նաև զրականութիւնով ու գեղարւեստով, որին սիրահար էր մանաւանդ Գագիկ Ա.: Գեղարդաբար այս Գագիկ թագաւորը՝ գեղարուեստին աւելի՛ քան իր որդոց կրթութեանը անձնատուր լինելով՝ հայրենիքի ապագայի համար հոգ չտարաւ: Ուստի իր մահուանից յետոյ երկու ժառանգների մէջ գահի համար վէճ ծագեցաւ: Միքանի ժամանակ միմեանց հետ կուելուց յետոյ՝ Գագիկի ժառանգները թագաւորութիւնը բաժանեցին միմեանց մէջ Շիրակը՝ Անի մայրաքաղաքով բաժին ընկաւ աւագ եղբօրը—Յովհաննէս

Սմբատին, իսկ Շիրակից դուրս գտնուած երկիրները բաժին ընկաւ կրտսեր եղբօրը—Աշոտին:

Յունաց կայսրները, կարծես երկու եղբայրների այդ պառակտմանը երկիրն էլ իրենց հետ պառակտեցնելու դժբաղդ դէպքին էին սպասում (թերևս այդ պառակտման մէջ էլ իրենց մատը խտան էր) իրենց նենգամիտ և ցարդ թագուն պահած մտադրութիւնը լոյս աշխարհ հանելու:

Պէտք է գիտենայ ընթերցողը, որ այդ միջոցներում յոյները մեծապէս հալածել էին սկսել իրենց հպատակ հայերին՝ կրօնական և եկեղեցական խնդիրների պատճառաւ: Եւ անա Բագրատունեան թագաւորութեան երկու ձիւղի բաժանելը տեսնելով Վասիլ Բ. կայսրը, զրոհ տւեց դէպի արևելք՝ պատրաստի որսը ձեռք բերելու:

Վասիլ Բ.-ի այդ յարձակումից սարսափած՝ Շիրակի թագաւոր Յովհաննէս Սմբատը փութաց մի պատգամաւորութիւն ուղարկել մինչև Տրապիզոն, խնդրելով կայսրից չյարձակել իր վրայ և թոյլ տալ իրեն մինչև մահը թագաւորել:

Եթէ կայսրը Յովհաննէս Սմբատի այս խնդիրը յարգէր: վերջինս պարտաւորում էր իր

մայրաքաղաք Անին կտակել կայսեր անուանը*): Վասիլ Բ.-ը ի հարկէ սիրով ընդունեց իրեն առաջարկուած պայմանը և յետ դարձուց իր բանակը:

Նա ինքը մեռաւ 1025-ին: Նրան յաջորդներից՝ Կոստանդին Մոնոմախօսը Գագիկ Բ. հայոց թագաւորին խաբէութեամբ Պօլիս հրաւրեց և այնքան ժամանակ պահեց, մինչև որ Անիի բանակներն բերեցան և իրեն յանձնեցան:

Այնուհետև Մոնոմախօսը Շիրակ գորջ ուղարկեց և հայերի դիմադրութեանը յաղթահարելով Անիում, երկրին արեց և միացրեց իր կայսրութեան հետ: Ապա հայ գորջերին ցրեց եւ նշանաւոր քաղաքների ու բերդերի պահապան դրեց յունական գորջեր: Իշխաններին եւ ազնւոցիկ մարդկանց առհասարակ հալածեց, արտրեց, ոմանց սրի քաշեց, ոմանց թունաւորեց, իսկ ժողովուրդի վրայ ժանրաժանր հարկեր դրեց: Դրանցմով չքաւահանուցած՝ ծեռնամուխ եղաւ հայոց կաթողիկոսութիւնը ջնջելու եւ հայերին քրնութեամբ յունադաւան դարձնելու:

Այդ նպատակաւ էլ յունասէր Պետրոս կաթողիկոսին, — նրան, որ Անին յունաց էր յանձ-

նել վեստ Սարգիս իշխանի հետ, — Պօլիս կանչեց:

Սակայն ժԱ. դարու սկզբներում առաջին անգամ Հայաստանում երեացող սելջուկները՝ ժամանակ չտուին յունաց կայսեր այդ շար, դիւական խորհուրդը ևս ի գլուխ հանելու:

1064 թուին Ալփարսլանը Վրաստանից յետ դառնալիս՝ Անին 25 օր պաշարելուց յետոյ՝ վերցրեց: Նրա գորջերը երկու ձեռքերում միմի սուր բռնած, երրորդ սուրն էլ բերաններով պահած՝ ներս մտան քաղաք և քարուքանդ արին ամեն ինչ սուր ու սուսերի քաշեցին հային էլ, յոյնին էլ, — նրանց՝ որոնք 20 տարի էլ չկարողացան իրենց ձեռքին պահել Անին, որ այնքան անիրաւութեամբ խլած էին հայոց ձեռքից:

— «Եթէ յունաց կայսրութիւն, — իրաւամբ ասում է պատմիչը, — մի քիչ հեռատեսութիւն ունենար, գայիք փոթորիկները գուշակելն և առաջն առնելը այնչափ ալ դժուար չէր Հայք իրենց երկրին լեռնային դիրքովն ու իրենց ալ լեռնականի կազմովը բնական պատուար մ'էին կայսրութեան և հաստատ թումբ այդ փոթիկիք հոսանքներուն, այդ ազգաց խօլ արշաւներուն դէմ: Բայց յոյնը չկրցաւ ըստ արժանւոյն օգտուիլ բնութեան և կրօնքի իրեն հայթայթած պաշտպանութեան այդ ամենամեծ միջոցէն:

*) Յովհաննէս Սմբատ ժառանգ չունէր:

Ընդհակառակը նախանձոտ ազնուականութիւնը
և մանաւանդ մոլեռանդ կղերը ամեն ջանք ի
գործ դրաւ այս երկու քրիստոնիեայ ազգաց
մէջ անմիաբանութիւնը և հակառակութիւնը
վառ պահելու *), քաղաքականապէս տկարաց-
նելու հային, որպէսզի իր եկեղեցական իրաւա-
նութեան տակ տանէ զայն:

«Այսպիսով կայսրութիւնը կուրութեամբ

*) Անիին տիրելուց յետոյ՝ յոյները Գագիկ թա-
գաւորին փոխադրեցին Կապադովկիա, ուր ազատ ապ-
րում էր (գաղանի հսկողութեան ներքոյ ի հարկէ):

Կեսարիայի յունաց մետրոպօլիտը, Մարկոս ա-
նունով, իր շան անունը Արմէն էր դրել: Գագիկը
լսելով հայատեաց եկեղեցականի այդ վարմունքը, մի
օր նրա մօտ գնաց իր հայ թիկնապահներով, և իր
լսածը ստուգելու համար՝ խնդրեց մետրոպօլիտին շա-
նը կանչելու: Հէնց այն էր որ տիրօջ «Արմէն» ձայնի
շունը ներս վագեց, Գագիկի մարդիկը անմիջապէս
բռնեցին տիրոջն էլ, շանն էլ և երկուքին միասին մի
պարկի մէջ կոխելով ու կապելով սկսեցին չարաչար
ծեծել: Թէ հարուածներից և թէ կատաղած շան կծո-
տելուց՝ երկուքն էլ սեռան: Իրենց մետրոպօլիտին ե-
ղած այդ անարգանքին համար յոյները Գագիկին բեր-
զի պարսպից կախեցին: Մի քիչ յետոյ էլ Գագիկի
Յովհաննէս և Դաւիթ որդոցն էլ, ինչպէս և Աշոտ թո-
ռանը՝ մինը միւսից յետոյ թունաւորելով՝ վերջ տուին
Բագրատունեաց թագաւորութեան տոհմին:

Ժամսօթ. յող.

հարուածեց հային, տկարացուց նրան, կամ ունէ
օգնութիւն մը չըրաւ անոր, երբ կարող էր, այլ
ինքն իր ձեռքովը կամաց-կամաց տապալեց այս
թումբը և ազգաց հեղեղը, զոր ժամանակ մը
կեցուցած էին հայք արևելքէն, դարձուածքով
մը հիւսիսի, Եւրոպայի կողմէն ինկաւ կայսրու-
թեան վրայ և մեծ տագնապ հասցուց անոր
Բուլղարիա, Սերբիա և Թրակիա: Բայց վերջա-
պէս ինկաւ հայն ալ անօգնական և մինակ մը-
նացած. իր լեռներն ու դաշտերը ողողուեցան
այլակրօն, այլացեղ, այլալեզու բարբարոս ազ-
գաց վոհմակներէ, որոնց առջն այսուհետեւ բաց
էին կայսրութեան դռները արևելքի կողմէն ալ,
և որ իբրև գիշատիչ արծիւներ ու ագռաւներ
ինկան անոր դիակին վրայ ու յառաջացան քայլ
առ քայլ դէպի անոր սիրտը—Պօլիսը, և կրծելով
քամեցին անոր արեան յետին կաթիլն իսկ:

«Պօլսոյ գրաւումը 1453-ին, այս յունական
յիմար ինքնասպանութեան վերջին հարուածն
է: Պօլսոյ պատնէշներուն վրայ և դռներուն առ-
ջը յոյնը կը քաւէր այն միջագգային մահացու
մեղքերը, այն յիմարութիւնները, զոր գործեց
հայուն դէմ (առանց խօսելու իր իսկ ներքին
ապականութեան վրայ), դաւաճանելով հայուն
դէպի յունական կայսրութիւնը տածած սէրը,
յարգանքն ու հակամէտութիւնները:

1004
1681

Հայը քրիստոնէութիւնը ընդունելէն վերջը, բոլոր հոգևով, անկեղծօրէն տուած էր ինքզինք յօյնին, իրը իր հաւատակից մեծ եղբայր կամ քոյր եկեղեցին: Յօյնին կրօնքը, լեզուն, քաղաքականութիւնը և գրականութիւնը զինք կը քաշէին անգիմաղբելի կերպով: Իսկ յօյնը փոխանակ հայուն այս բարի տրամադրութիւններէն՝ պատրաստականութիւններէն օգտւելով, զայն քրիստոնէական քաղաքակրթութիւնը յարեւելս հաստատուն և կայսրութիւնը կանգուն պահելու գործին մէջ գործածելու, — որուն մասը և յառաջապահ բանակը կը նկատէր ինքզինք հայը տեսակ մը հպարտութեամբ, — զայն կը խաբէր, անոր վստահութիւնը չարաչար կը գործածէր, անոր օգնութեան կարկառած ձեռքը՝ ծանր պահանջներով ու պայմաններով յետս կը մղէր; ու երբեմն մինչև իսկ իր ու հայուն հասարակաց թշնամւոյն միացած՝ հայուն դէմ կը դաւաճանէր, կամ առանձին դաւեր կը նիւթէր» *):

III.

Յօյների նենգ և ամարդի վարմունքը Բագրատունեաց թագաւորութիւնը ջնջելու նկատ-

*) Պատմ. Արևելեան խնդրոյ, իր. 153—155.

մամբ, երկրին տէր դառնալուց յետոյ՝ հայ իշխանների և զօրքի դէմ նրանց յարուցած հալածանքը, ժողովրդի վրայ բարդած ծանր հարկերի սահմանելը, հայ կաթողիկոսութիւնը ջնջելու և հայերի յունացաւան դարձնելու գաղտնի ու ու յայտնի փորձերն ու ջանքերը, Գագիկ թագաւորին անարգաբար բերդից կախելը և նրա եղբօրօրդիներին թունաւորելը, — կարևոր խոցեցին հայերի սիրտը առհասարակ և վրէժխնդրութեան ոգևով տոգորեցին նրանցից շատերին:

Դրանցից մէկն էր Ռուբէն անունով իշխանը, որ Գագիկ թագաւորի ազգականն էր և քաջ տղամարդ:

Բագրատունեաց վերջին թագաւորի անարգական մահւան վրէժը Յօյներից առնելու և իր ազգը նրանց կեղեքումներից ու հարստահարութիւններից ազատելու դիտաւորութեամբ՝ Ռուբէն իշխանը՝ վնաց Տաւրոսի բարձրութիւնները և իր դրօշակի շուրջը հաւաքելով տեղացի հայերին *) Տաւրոսի սարերից քշեց Յօյներին և նրանց երկրին տէր՝ ինքը դարձաւ:

*) Դեռ Արամի ու Տիգրանի յաղթական արշաւանքներից սկսեալ՝ հայերը հաւաքուած էին Կիլիկիա՝ Փիւնիկիայի և Եգիպտոսի հետ առևտուր անելու: Արշակունիանց, յետոյ էլ Բագրատունեաց թագաւորու-

Բացի քաջութիւնից՝ Ռուբէնը իշխանը քաղաքագէտ էլ էր: Նա իր 15 տարւայ կառավարութեան ընթացքում կարողացաւ թէ՛ իր հովանաւորութեան ներքոյ գտնւած ժողովրդին հայրաբար կառավարելու և թէ՛ իր գերիշխանութիւնը ճանաչեցնել տալու Տաւրոսի բարձրութիւնների վրայ բնակւած բոլոր հայ իշխաններին, սրոնք և մեծապէս նպաստեցին Ռուբէնի նորահաստատ տէրութեան աճելուն և զօրանալուն:

Ռուբէնին յաջորդեց 1095 թւականում Կոստանդին Ա., որ հօր թողած ժառանգութիւնն ընդարձակեց՝ յոյների ձեռքից մի քանի ամուր բերդեր առնելով և իր իշխանութիւնը Վահկա ամրոցում հաստատելով:

Այսպիսով ահա, սիրելի ընթերցող, Ռուբե-

թիւնները վերանալուց զկնի, — հայ գաղթականների թիւը առաւել ևս շատացաւ Կիլիկիայում: Վերջերուսն էլ՝ յոյների, պարսիկների, արաբացիների ու սելջուկների հալածանք ու տանջանքներից հարկադրւած՝ Հայաստանից նորանոր գաղթականներ եկան Կիլիկիա: Այնպէս որ ԺԱ. դարում Կիլիկիայի հայերը՝ իրենց բազմութեամբ՝ յոյների հետ մրցում էին, ունենալով իրենց քաղաքները, բերդերը, սեփականատէր հայ իշխաններով, իրենց եկեղեցիներն ու վանքերը, որոնց մէջ հայ վարդապետները գրականութեամբ էին պարապում:

նեաց թագաւորութեան սկիզբը դրւեցաւ Տաւրոսի բարձրութիւնների վրայ:

Կոստանդին Ա.-ին յաջորդեց իր որդի Թորոս Առաջինը, որ աւելի հետամուտ եղաւ երկիրն ընդարձակելու:

Նա յարձակւեցաւ յոյների վրայ և նրանց Անարգաբա՝ քաղաքին և նրա շրջականներին տիրելով՝ կայսերական զօրքերը քշեց, վտարեց այն կողմից, — Ապա մի քանի այլ տեղեր էլ յոյների ձեռքից խլելով, Թորոս Ա.-ի իր տէրութեան սահմանը մինչև Կապադոկիա հասցնելով, Կիզիստրայի բերդին, որի պատից յոյները կախել էին Գազիկ թագաւորին, — տիրեց յարձակմամբ և վերջրեց այնտեղ պահւած գանձերը:

Երբ Գազիկ թագաւորի սուրն ու զգեստները բերւեցան՝ Թորոս և հետը եղած հայերը, մինչև յետին զինւորը, սկսեցին աղի արտասուք թափել իրենց տարաբաղդ թագաւորի վրայ:

Բերդապահը — երեք յոյն իշխաններից մէկը, իրանց գլխին գալիքը գուշակելով, հայ զինւորների ձեռքից պոկ գալով՝ ինքնիրան բերդից վայր զլորեց և մեռաւ:

Երկրորդը բերդապահի այն հարցմանը թէ՛ «ինչ պատասխան պիտի տաս յունաց կայսեր, որ նրա իշխաններին այսպէս չարչարում են», Թորոսը գայրացած գոչեց՝ «խսկ դուք ի՞նչ պա-

տասխան անուիք հայոց ազգին, որ իրենց թագա-
ւորին սպանեցիք»: Եւ այս անելուց յետոյ՝ Թո-
րոսը իսկոյն հեթ սպանեց յոյնին:

Թորոսին յաջորդեց նրա եղբայրը՝ Լևոն Ա.

Սա էլ եղբօր ընթացքին հետևելով յոյնե-
րից վերջրեց Մամեստիա և Տարսոն քաղաքնե-
րը և այսպիսով գրեթէ ամբողջ Կիլիկիայի տէրը
դարձաւ:

Դժբախդաբար Լևոն Ա. իր քաջութեան հետ՝
խոհեմութիւն, քաղաքագիտութիւն չունէր: Եւ
հէնց դրա համար էլ՝ պատճառ դարձաւ թէ իր
դժբաղդութեան և թէ Ռուբինեանց նորահաս-
տատ թագաւորութեան տապալմանը, թէպէտ և
ժամանակաւոր կերպով:

Բանը նրանումն է, որ այդ ժամանակնե-
րում խաչակրաց արշաւանքներն սկսել էին
Եւրոպայից դէպի ս. երկիրը, ուր ամենայարմար
ձանապարհը Կիլիկիան էր:

Հայերը իրենց թեթևամտութեամբ, յարե-
ցան լատինացիներին իբրև քրիստոնեայ տարրի
մասամբ: Մասամբ էլ իրանց աջակցութեամբ
իրենց տէրութիւնը պնդացնելու և ապահովաց-
նելու նպատակաւ:

Ուստի և խաչակրաց արշաւանքների սկզբից
մինչև վերջը՝ միշտ համակիր ձեռնաու հան-
դիսացան նրանց՝ նրանց սոված թանակներին

սրաշար, ողեցոյց, զօր մնասկարեշով, հազա-
րաւոր հոգով կամաւոր գրեշով նրանց զօրեւրի
շարժում եւ այլն: Բայց հայերի վարմունքը շատ
թանգ նստեց իրենց վրայ:

Պաշտպանելով և օգնելով լատինացիներին
նրանք զրգուեցին իրենց դէմ Կիլիկիայում, նրա
շրջակայքում և նրա սահմանակից տէրութիւ-
նում գտնուող մահմէդական աշխարհը — Եգիպտո-
սի սուլթաններին և միւսներին:

Այսպէս Լևոն Ա. Անտիոքի Ռոժէր իշխանի հետ
միացաւ՝ թուրքերի ձեռքից Ազազ բերդաքա-
ղաքն աւնելու, բայց յետոյ զղջալով՝ թուրքերի
հետ նոր դաշն կապեց և հիմա էլ Անտիոքի վրայ
յարձակեց: Ռոժէրի յաջորդ Բոհեմոնդը՝ Մա-
րաշի Բալդուին կոմսի հետ խօսքը մէկ անելով,
Լևոնին թակարդի մէջ գցեց և տարաւ Անդիս-
քում բանտարգեց 1135 թուին:

Լևոն ստիպւեցաւ Ադանա և Մամեստիա
քաղաքների հետ 60,000 դահեկան էլ պատերազ-
մական ծախք տալ, իր մէկ որդին էլ պատանդ
թողնել: Ճշմարիտ է շատ չանցած Լևոնը թէ իր
քաղաքները Բոհեմոնդից յետ առաւ, թէ իր պա-
տանդ որդւոյն հետ ստացաւ և թէ Անտիոքի եր-
կիրը մի լաւ տնտեսակեց:

Սակայն իր ուժերը շատ և շատ թուլացրեց,
նազաղցրեց:

Այս հանգամանքից մեծապէս օգտուեց Յովաննէս Կոմնենոս յունաց կայսրը և Կիլիկեան կոչուած զոներով Լեոնի երկիրը մտաւ։ Մամեստիտ, Տարսոն և Ադանա միմեանց քամակից անձնատուր եղան և կայսերական զօրքերն Անարգաբա քաղաքի առաջն էին կանգնել, երբ Լեոնը հասաւ նրան պաշտպանելու։ Բայց չկարողացաւ։

Ուստի խոյս տուեց և Վահկա բերդում կենդրոնացրեց իր ոյժերը։ Այնտեղից նա յաջողեց մի քանի լատին իշխանների հետ միանալ։

Սակայն յոյները թոյլ չտւին Լեոնի ծրագրի իրագործումը և Վահկան ամէն կողմից շրջապատեցին։ Երկար ժամանակ պաշար չունենալով Լեոնը անձնատուր եղաւ և շրջայակապ Կ. Պօլիս ուղարկեցաւ իր երկու որդիների հետ, որ էին Ռուբեն և Թորոս։ Պօլսում յոյները Ռուբենի աշխարհ փորեցին և խոշաւեցրուց յենոյ սպանեցին։ Անդրանիկ գաւառի այդ տաճարապետներին յղիմացաւ Լեոնը և սրտի ցաւից ինքն էլ բաւեցի կապանքները մեջ մտնաւ 1141 թուին։

Կենդանի մնաց միայն Լեոնի կրտսեր որդին, — Թորոսը, որ հօր մահից յետոյ բանտից ազատուել էր և կայսերական բանակի մէջ ընդունուել։

Յունաց կայսրը Թորոսին իր հովանաւորու-

թեան տակ առաւ՝ ժամանակին նրան իր ձեռքին գործիք շինելու։ Սակայն նախախնամու թիւնը այլ կերպ էր սրոշել։

Կոմենոս կայսեր մահից յետոյ՝ Թորոսը ծածուկ փախաւ յունաց բանակից և 10,000 հայ կարիճներով և Հալեպի սուլթանի մօտ եղող Սաեփանէի և Մլէհի աջակցութեամբ՝ կարճ ժամանակում յոյներից վերցրեց իր հօրից խուած բոլոր քաղաքներն ու բերդերը, տիրեց թէ լեոնային և թէ դաշտային Կիլիկիոյ հայկական զիւղերին ու աւաններին, նրանցից դուրս քչեց յոյներին և նորից վերականգնեց հայրենի թագաւորութիւնը։

Կիւ Մանուէլ կայսրը Կիլիկիայի անցքերը լսելով շտապեց այնտեղ ուղարկել իր հօրեղբոր որդի Անդրոնիկոսին՝ կեսաւ տխրոսը տալով նրան։

Թորոսը ջարդ ու փշուր արաւ նրա 12,000 հոգուց բաղկացած բանակը և իրեն էլ փախցրեց։

Կիւ Մանուէլ կայսրը գայրացած Թորոսի այդ քաջութիւնների վրայ և միայնակ նրան յաղթել անհնարին գտնելով՝ Իկոնիայի Մաղսուտ սուլթանին կաշառելով՝ Թորոսի վրայ ուղարկեց։ Բայց Թորոսը Մաղսուտին էլ ջարդեց և ասպատակ սփռեց նրա երկիրը։

Այս ձախորդութիւնից յետոյ յունաց կայսրը

նոր թշնամի որոնեց Թորոսի դէմ և գտաւ Ան-
տիօքի իշխանի խնամակալին՝ Բընօ-Շատրիօն
անունով: Բայց այս անգամ ևս բաղդը ժպտաց
Թորոսին: Սա յաջողեցաւ Գր-Շատրիօնին յոյ-
ների դէմ զինել և հիպրոսի վրայ ուղարկել, իսկ
ինքը ոչ միայն ամբողջ հիլիկիային տիրեց, այլ
նաև Փոլսզիայի և Իսաւրիայի լեռնային մասերը
իր տէրութեան հետ միացրեց:

W.

Սակայն հիռ Մանուէլ կայսրն էլ հանգիստ
չմնաց, այլ նորանոր բանակներ ուղարկեց Թո-
րոսի վրայ. վերջինս թէև մի երկու անգամ
շատ նեղն ընկաւ, բայց վերջ ի վերջոյ մեծա-
մեծ ջարդեր տալով յոյներին և 13,000 մարդ
կոտորելով նրանցից՝ վերջնականապէս դուրս
քշեց յոյներին նաև իրանց վերջին ապաստա-
նարանից, — Մամեստիայից և ինքը լիակատար
տէր դարձաւ հիլիկիային: Նա մեռաւ 1168-ին:

Մի ամբողջ դար էր անցել այն ժամանա-
կից որ Ռուբէն Ա. հայոց անկախութեան հիմքը
դրել էր Տաւրոսի բարձրութիւնների վրայ:

Այդ հարիւր տարւայ միջոցում նրա յա-
ջորդները մեծ աշխատանք ու ճարտարութիւն
գործ դրին, շատ հայի արիւն թափեցին, մինչև

որ բովանդակ հիլիկիայի տէր եղան և յունաց
կայսրին ստիպեցին այդ երկրից բոլորովին հրա-
ժարւել:

Այնուհետև հարկ էր հաստատուն և կանո-
նաւոր կարգեր սահմանել երկրի մէջ և քաղա-
քակիրթ տէրութեան կերպարանք տալ նրան:

Այս մեծ գործը վիճակեցաւ Լևոն Բ.-ին,
որ որքան քաջ ու յաջողակ զօրապետ էր պա-
տերազմի դաշտում, նոյնքան իմաստուն կառա-
վարիչ և աշխարհայէն իշխան հանդիսացաւ խա-
ղաղութեան ժամանակ, որով և նրա երկարատև
իշխանութեան յիշատակը անջնջելի մնաց հայոց
պատմութեան մէջ,

Իր թագաւորութեան դրացի մի քանի մահ-
մեղական իշխաններին, որոնք սահմանազուլս-
ներում խլրտիւններ էին առաջ բերում, — Լևոն
Բ. զսպեց և մեծամեծ կոտորածներով՝ նրանց
խելքի բերեց:

Իսկ այնուհետև իր բոլոր մտադրութիւնը
երկրի բարեկարգութեան վրայ դարձրեց:

Սահմանազուլսների վրայ ամբոցներ շինել
ուեց և նրանց մէջ պահապան զօրքեր դրեց:
Երկրի մէջ վանքերի հետ, որոնք այդ ժամանակ-
ներում կրթութեան միակ տեղերն էին, զանա-
զան հիւրանոցներ, հիւանդանոցներ և որբանոց-
ներ հաստատեց, երկրագործութիւնը, վաճա-

ապահովութիւնը և նաւարկութիւնը ծաղկեցրեց:

Մինչ այսպէս Կիլիկիան իր իմաստուն իշխանի խնամակալութեան տակ խաղաղութեան բարիքները վայելում էր, Գերմանիայի Ֆրեդրիկոս Ա. բարբարոսա կայսեր առաջնորդութեամբ մի նոր խաչակրաց արշաւանք սկսեցաւ Եւրոպայից:

Իկոնիա հասնելով Ֆրեդրիկոս դեսպան ուղարկեց Լևոնին և նրա ձեռնաուղիութիւնը խընդրեց քրիստոնէական գործի մէջ, խոստանալով որ այդ օգնութեան փոխարէն թագաւոր կը պըսակէ նրան:

Լևոն Բ. անմիջապէս յայտնեց իր պատրաստականութիւնը և, ինչպէս վերևում յիշեցինք, նրա սոված բանակին առատութեամբ պաշար հասցրեց: Այնուհետև Լևոն Բ., Գրիգոր Գ. կաթողիկոսը ներսէս Լաբրոնացու ուղեկցութեամբ գնացին կայսեր դիմաւորելու, բայց չտեսան, որովհետև գետում լողանալիս՝ նա խեղդուած էր:

Սոստացուած թագը Լևոնին աւեց Հենրիկոս Զ. Ֆրեդրիկոսի որդին Պապի համաձայնութեամբ:

Տարսոնի մայր եկեղեցում Լևոն Բ. 1198-ին օծւեցաւ հայոց թագաւոր:

Հանդէսին ներկայ էր Հենրիկոսի և Պապի կողմից Կոնրադ կարդինալը:

Այնուհետև նորապսակ թագաւորը՝ իր աթոռը Տարսոնից Սիս փոխադրելով, ամենից առաջ որոշեց իշխանների յարաբերութիւնը թագաւորական տան հետ, այլ և այլ պալատական և զինւորական պաշտօններ սահմանեց, դատարաններ հիմնեց, հարկերի և տուրքերի քանակութիւն որոշեց և այս ամէնով իր տէրութեանը Եւրոպական պետութեան կերպարանք տուեց:

Ազգի կրթութեան վրայ հոգ տանելով՝ Լևոն Բ. դպրոցներ հիմնեց, որոնց մէջ դասախօսելու հրաւիրեց ամեն ազգի և կրօնի ուսումնական մարդկանց: Հայկական դրօշակի տակ ծառայելու շատ ֆրանսիացի, իտալացի, գերմանացի և անգլիացի զօրավարներ հրաւիրեց: Անկախ զբրանից՝ եւրոպացի ասպետական կարգերին կալածներ պարգևեց իր երկրի մէջ, ջենովացիներին և վենետիկցիներին առևտրական արտօնութիւններ շնորհեց, սրով Կիլիկիայի վաճառականութիւնը ընդարձակեց Եւրոպայում:

Այսպիսով Լևոն Բ. սերտ յարաբերութիւնների մէջ մտաւ եւրոպական ազգերի հետ և բոլորովին բաժանւեցաւ յոյներից, որոնց դէմ հարկը ստիպած ժամանակ կարող էր յաջողութեամբ մաքառել իր նոր դաշնակիցների օգնութեամբ:

Իայց այս մերձաւորութիւնից ամէնից ա-

ւելի օգուտ պիտի քաղէին Հոռոմայ պապերը իրանց կրօնական նպատակների համար:

Այս ժամանակներից սկսած՝ մի մեծ թրդ-թակցութիւն բացւեցաւ պապերի և հայոց կաթողիկոսների ու թագաւորների մէջ, որի նպատակն էր Հռոմէական և հայկական եկեղեցիների միացնելը:

Եղան թագաւորներ, որոնք Հռոմին ինչ ինչ զիջումներ անել խոստացան, բայց հայ ազգը քաջութեամբ պաշտպանեց իր եկեղեցւոյ անկախութիւնը Վատիկանի դէմ, ինչպէս որ նախընթաց դարերում պաշտպանել էր Բիւզանդիայի բռնութեան դէմ, և Հռոմի բոլոր ջանքերը որոշ արդիւնք չունեցան, բայց եթէ երկպառակութիւն սերմանել ազգի մէջ և հայոց թշնամիների զայրոյթը գրգռել, որոնք պիտի շտապէին օր առաջ կործանել Կիլիկիան քաղաւորութիւնը որպէսզի Եւրոպան առիթ յունենայ միջամտելու արեւելեան գործերի մէջ:

Լևոնի մահւանից յետոյ, որ տեղի ունեցաւ 1219-ին, Ռուբինեան թագաւորութիւնը քայլ առ քայլ դէպի անկումն զիմեց:

Արու գաւազ չունենալով Լևոն Բ. իր թագաւորութեան ժառանգ հրատարակեց իր եղբոր թոռանը, որ կոչւում էր Ռուբէն-Ռայմոնդ, յետոյ իր այդ կարգադրութիւնը փոխելով, եւրո-

պական թագաւորների սովորութեամբ իր թագին ժառանգ անւանեց զեռահասակ Զապէլ դստերը իր երկու ազգականների խնամակալութեան ներքոյ: Հասակն առնելով Զապէլն ամուսնացաւ մի եւրոպացի իշխանազունի հետ, Փիլիպպոս անուանով, որ թէև հայոց ծէսով ու սովորութեամբ վարւելու և հայկական օրէնքները ճշմարտութեամբ պահելու խոստում էր տուել, բայց զըր-ժեց:

Այնուհետև եւրոպացիների հետ խնամութիւն անել, նրանց աղջիկ տալը, կամ նրանցից աղջիկ առնելը, սովորութիւն դարձաւ հայ թագաւորների և իշխանների մէջ: Հայկական պարզ, անպաճոյճ կանոններին և մաքուր վարք ու բարքին՝ յաջորդեցին շոտլոթիւնն ու զեղիսութիւն: Տեղի ունեցան թէ ներքին և թէ արտաքին երկպառակութիւններ, նոյնիսկ վէճեր ու կռիւներ, որոց խաղաղացնելու համար՝ Հռոմից կարգինալներ էին գալիս և ազատութեամբ եւրոպացիների կողմն էին անցնում և թագաւորական ցեղի իրաւունքը՝ եւրոպականի էին վերածել տալիս: Ազգեցիկ հայ իշխանների դաւաճան քայլերը խրախուսում էին և ազատամիտ հոգևորականներին թև ու թիկունք դառնալով եկեղեցիների միութեան հարցը առաջ քշում ամենայն խորամանկութեամբ: Արդէն բաւականին հայեր,

նոյնիսկ կաթողիկոսների միջից, հակամիտ էին եկեղեցիների միացմանը:

Լևոն Դ.-ի հրամանաւ 1305 թուին Սիսուս կայացած ազգային ժողովը, թագաւորի ճնշման տակ, պաշտօնապէս ընդունեց եկեղեցիների միութիւնը: Մի այդպիսի ժողով էլ տեղի ունեցաւ. Լևոն Դ.-ին յաջորդ և նրա եղբայր Օշի-նի հրամանաւ Տարսոն քաղաքում:

Սակայն թէ առաջին և թէ երկրորդ ժողովների որոշումները իրանք էին գործադրում: Ժողովուրդը իր ամբողջութեամբ մերժելով մերժեց այդ ժողովների որոշումները և երբէք չհպատակեցաւ նրանց:

Ռուբինեան թագաւորութեան այս ներքին դժբաղտութեան վրայ աւելացաւ և արտաքին և մեծագոյն դժբաղտութիւն ևս:

Պաղեստինին և Ասորոց երկրին տիրանալուց յետոյ. եգիպտոսի սուլթանները իրանց բոլոր զօրութիւնը դարձրին Կիլիկիայի վրայ, աշխատելով հայերին ևս նուաճել, որ միակ քրիստոնեայ տէրութիւնն էր մնացած այն կողմերում և որ յայտնի էր իր լատինասիրութեամբ և եւրոպացիներին յարելովը:

Հայերը անկարող լինելով պաշտպանել զօրաւոր թշնամիների դէմ, իրանց փրկութեան յոյսը դնում էին Հռոմի արքունիքի վրայ, որի

միջնորդութեամբ անդադար դիմում էին արեւմտեան քրիստոնեաների օգնութեանը: Բայց Հռոմը իր «ունիթթոն»ներին ուղարկեց Կիլիկա, որտեղից յետոյ անցան նրանք բուն Հայաստան:

Ուրիշ օգնութիւն գլացաւ տալ եւրոպան հայերին, որոնցից անխքան ու անխքան բարիք և օգնութիւն էր տեսել խաչակիրների բոլոր ժամանակը:

Մարզկանց երեսից Կիլիկիայի հայերին հասած այս թշւառութեանց վրայ աւելացաւ նաև ժանտախտը, յետոյ սովը:

Եւ անա այդ տեղը երևացաւ Հռոմի և եւրոպական թագաւորների «քրիստոնէական մարդասիրութիւնը»:

Ֆրանսիայի Փիլիպոս 2. թագաւորը սուլայլով հայերին 10,000 Ֆիօրին ուղարկեց, իսկ Բենետիկտոս պապը...մ'ի քանի պարկ ցորեն: Այո, հէնց այսքան:

—Ահա, սիրելի ընթերցող, թէ եւրոպացիներին դիմելը, նրանց վրայ յոյս դնելը Ռուբինեան թագաւորներին ինչ օրի հասցրին:

Եւ որպէսզի հայերի եւ եւրոպացիների յարաբերութիւնների մի անգամ ընդմիջաւ վերջ տրւի, եգիպտացոց սուլթանը.—Մեհիք-էլՆազար-Մամ-մ'ուս անունով,—1335—1337-ին երկու անգամ յարձակեց Կիլիկիայի վրայ եւ ամէն բան ան-

ընկուց յետոյ՝ ստիպեց Լևոն վերջինին, սուլթանի դեռպանի ներկայութեամբ՝ խաչի և աւետարանի վրայ երգում ուտել, որպէսզի այնուհետև նորոպացիներն հետ ոչինչ յարբերութիւն, ոչինչ հաղորդակցութիւն չունենայ:

Լևոն կերաւ այդ երգումը և միքանի տարուց յետոյ մեռաւ 1341-ին: Երա հետ էլ վերջնականապէս մեռաւ ևս Ռուբինեան թագաւորութիւնը:

Ես իմը վերջացրի:

Այժմ թող ընթերցողը ինքն անէ իր եզրակացութիւնը պատմութեան այս դասերից:

Ես իմ կողմից կասեմ միայն հետևեալը:

Եթէ Արշակունեաց և Ռուբինեանց թագաւորութիւնները կործանեցան գլխաւորապէս հայ թագաւորների, և առհասարակ ազգը ղեկավարողների՝ իրանց չարն ու բարին չիմանալուց, իրենց թշնամին ու բարեկամը չճանաչելուց, անցեալի փորձերից չխրատելուց, — հապա ի՞նչ կարելի էր սպասել այդ թագաւորների և այդ ղեկավարների ժառանգներից, նրանց յետնորդներից, որոնք թզաչափ հոգ անգամ չունենալով իրանց ստրկտակ, և գնդասեղի չափ քաղաքագիտութիւն չունենալով իրանց գլուխներում, — ժամանակ առ-ժամանակ, մինչև ներկայ 20-րդ դարը, այստեղ ու այնտեղ երևեցան հայ կեանքի քաղաքական

հորիզոնի վրայ ինչպէս մի մի ասուպներ և խա-կոյն վայր գլորեցան և անհետացան, իրանց ըզուէական փայլով նախ հրապուրելով և ոգևորելով այս ու այն ազգային հատուածներին և ապա իրենց հետ տապալելով և կործանելով նաև այդ հատուածներին Ֆիզիկական, տնտեսական, մտաւորական և բարոյական կացութիւնը, վիճակը. վիճակ՝ որից եթէ ուզում էք դուրս գալ եւ մեր գոյութեան վրայ դնելու պահանջներ աւել խաչից խուսափել, պէտք է անսպաժման, և մի անգամ ընդմիջաւ, մեզ հետու պահենք որևէ քաղաքական շարժումներից, քաղաքական գործերի և հաշիւների միջամտութիւններից և բոլոր սրտով ու հոգով նւիրենք քաղաքակրթական խաղաղ, շինարար աշխատանքի:


Բաւական է՝ որքան ուրիշների համար կրակների միջից շագանակներ հանելով մեր ձեռքերն այրեցինք:

Բաւական է՝ որքան ուրիշների ակնոցները գնրծածելով, մեր աչքերին վնասեցինք և մինչև կուրութեան հասցրինք մեզ:



The first part of the manuscript is a list of names and titles, including
 the names of the authors and the titles of their works. The list is arranged
 in a columnar fashion, with the names of the authors on the left and the
 titles of their works on the right. The names are written in a cursive
 hand, and the titles are written in a more formal, upright hand. The list
 includes the names of several prominent figures of the time, and the
 titles of their works are also clearly legible. The list is followed by a
 section of text that appears to be a preface or an introduction to the
 manuscript. This section is written in a cursive hand and contains
 several paragraphs of text. The text is somewhat faded and difficult to
 read, but it appears to be a formal address or a dedication to the
 reader. The manuscript is written on aged, yellowed paper, and the
 ink is somewhat faded and difficult to read. The overall appearance of
 the manuscript is that of an old, well-used book.

A small, handwritten note or signature is visible in the left margin, near the bottom of the page.



« Ազգային գրադարան



NL0413606

